



ՕՐԱԳԻՐ ԶՄԻՌՆԻԱՅ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ ԶՄԻՌՆԻԱՅ ԾԱՐԱԹ 4 ՄԱՐՏ 1878 ԹԻՒ 1087

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ձինի ահագին արիւնահեղութեանց և փոխադարձ ծանր ֆնասուց, վերջապէս հաշտութեան դաշնադրութիւնն կնքեցաւ յԱյսթան—Ստեփանօպոլսի Կ. Պօլսոյ՝ ի մէջ պատերազմող տէրութեանց՝ այսինքն Թուրքիոյ և Ռուսիոյ։ Թէև հաշտութեան պայմանքն տակաւին պաշտօնապէս չհրատարակեցան, այսու ամենայնիւ հրապարակական թերթք բաւական բացատրութիւններ տուին ի մասին նոյն պայմանաց։ Երբ յայտարարեցին «Պատերազմ» թերթք լրագրին ևս յիշտագայ համառօտ տեղեկութիւնն կուտայ։

«Պուլղարիոյ սահմանքն Սև—Շուբուն մէկ կէտէն մեկնելով պիտի հասնին ի կէս ճանապարհն Միտիայի և Ահեօլու Պուրկաղի, պիտի անցանեն հինգ հազարամէթր յայն կայս Ադրիանուպօլսոյ և պիտի յառաջանան մինչև մի ժամ հեռի ի Սելանիկէ։ Անդ Պուլղարիան պիտի ունենայ յանապառաժիւն մի ծովեզերաց, և սահմանն անդին վեր պիտի ելանէ մինչև ի Մանասթր։

«Գառաւաղին պիտի թողուն երկիր մի որ կը յառաջանայ դէպ ի Երուսաղէմ, նմանապէս այս իշխանութեան՝ պիտի տրուի զնաւահանագիտան Անդրիպօլսի և Սրիցայի, ինչպէս նաև զՊրէպօլսի և Պիլէք քաղաքներն Հէրսէքի փոքր քաղաքք, նմանապէս Նիշի և Շէհիւրդէյի միջակէքն Սերայիոյ պիտի տրուին։ Բայց Սերային պիտի մնայ ի մէջ Պուլղարիոյ։ Այս երկրին ու Գանուբի եզերաց և Պոսնիայի ու Հէրսէքի կառավարութեան կերպին խնդիրն պիտի որոշուի ի մէջ գումարուելի գետալանաժողովոյն։ Ասիոյ մէջ Ռուսաց սահմանն մի թեթև կոր գծիւ պիտի երթայ ի Պաթումէ մինչև ցալայաղի»։

Իսկ պատերազմի տուգանաց գումարն՝ ըստ իշխել լրագրոյն, թէև ի սկզբան հազար միլիոն ֆրանք զրուցուեր է, սակայն ետքէն 300 միլիոն ֆրանք որոշուեր է։

Բայց փարիզի «Տէպա» օրագրոյն ի մասին

տուգանաց պատերազմին՝ ըրած խորհրդածութիւնքն ամենեւեմ չեն յարմարիր Պատերազմին գրածին։ Հետեւաբար տարակոյս չկայ թէ նոյն խորհրդածութիւնքն, յորոց զյետագայ տողն կը քաղեմք, եղած են նախ քան զնաւազեցնելն յիշեալ տուգանաց։

«Եթէ անտի՝ յորում Ռուսիոյ լիազօր երեսխոխանք 1400 միլիոն ռուպլէ կամ 240 միլիոն լիւա սթէրլին խնդրեցին ի Բարձրագոյն Դրանէ, օսմանեան արժէթուղթքն՝ որ արդէն ինկած էին, վերստին և ընդհանուր կերպիւ իշխան։ Յայտնի է թէ Ռուսիան կը խորհէ ոչ թէ ի Թուրքիոյ՝ այլ յերկրագործութեան ինքն ինքն ահագին գումարն, դոնէ զճիւղ միլիոն լիւա սթէրլինն, որոց ի փոխարէն Թուրքիան արժէթուղթ (obligation) պիտի հանէ և յուղարկէ ի վաճառանոցն Լոնտօնի։ Արդ պահանջել ի պարտապանէ միոյ՝ որ արդէն ի սնանկութեան գըտանի, զվճարումն նոր պարտուց, կատարելապէս կործանելէ զառաջին պարտատեարս։ Օսմանեան հին արժէթուղթ ունեցող անգղիացի և գաղղիացի փոքր գրամադրիոյ տէր անձինք, որք մեծ ֆնաս կրեցին ի սնանկութենէն Թուրքիոյ, պիտի կորուսանեն զվերջին յոյսն որ կը փնտրէր նոյս։ Եւ այս խնդներուն գրգռանքէն կուզեն առնուլ առ ի վճարել զպատերազմական ծախսն Ռուսիոյ։ Եթէ Թուրքիան, կըսէ Լոնտօնի թայմզ օրագիրն, կարող էր վճարել միայն մէկ միլիոն, պարտ էր վճարել զայն Եւրոպիոյ և ոչ թէ Ռուսիոյ, որ երբեք և ոչ ոտակ մի փոխ տուաւ»։

«Բայց Բ. Դուռն» իրմէ պահանջուած գումարոյն և ոչ զտասներորդ մասն կրնայ ճարել։ Այլ մի բան միայն կրնայ տալ Ռուսիոյ՝ այն է զՀայաստան։ Բայց սովաւ ևս իւր պարտքն չվճարուիր, և պիտի մնայ միշտ 40 միլիոն Լ. սթէրլիննաց գումարն, որ կերպիւ իւրք՝ պատերազմի տուգանաց ամենէն ծանրագոյն մասն է»։

Ի մասին այս խնդրոյն՝ Լոնտօնի «Բէլ Մէլկա» զէթ» օրագիրն զհետեւեալ տողերն կը հրատարակէ։

Բուն, նոյն իսկ այսօր, երբ Եւրոպական ազգերը հասել են լուսաւորութեան բարձրագոյն աստիճանին, Հայերը քարամանալի ճարպիկութեամբ և մեծ յաջողակութեամբ միջուկ են նոյս հետ։ Ելէք ճանապարհորդեցէք Եւրոպայում, և ահա կը տեսնէք ինչպէս մեր հայրենակիցները հանգիստանում են այս ինչ մայրաքաղաքում իբրեւ երեւելի վաճառականներ, այն ինչ մայրաքաղաքում իբրեւ նշանաւոր հարուստներ, այստեղ երեւելի գիտնականներ, այստեղ համալսարանների պրօֆէսորներ, մի տեղ նախարարներ և զօրապետներ, միւս տեղ գեոպաններ և հիւպատոսներ, և այլն, և այլն։ Եւ այսու ամենայնիւ կան ոմանք, որք ոչ միայն կարծում են՝ այլև աշխատում են համոզել ուրիշները թէ՛ Հայերը մի բթամիտ և անընդունակ ազգ են և անարժան քաղաքական կենդանութեան։ Ոչ, ոչ, այդպիսի կարծիքք սխալ է և միանգամայն թշնամական։ Հայոց ազգը եղել է միշտ ընդունակ և շնորհունակ և կրնի այսուհետեւ առաւել ևս ընդունակ և հանճարեղ, միայն տուէք դորան քաղաքական հանգիստ և ազատ կեանք և միջոցներ դէպի Եւրոպական լուսաւորութիւն։ Վերջ բերեալ մտքերը հետեւանք են այն խորին և վսեմ տպաւորութեան՝ որը գործեց իմ վերայ Մանչեսթրի փոքրաթիւ Հայ հասարակութիւնը։ Թէև այլևայլ հանգամանքները չնեղեցին ինձ մնալ այդ հասարակութեան մէջ 2—3 օրից աւելի, բայց և այնպէս ես միջոց ու-

«Թուրքիան պարտաւորեալ է վճարել 40 միլիոն Լ. սթէրլին» նոր արժէթուղթ, որոց տուկոսն և գլխավճարն երաշխաւորեալ պիտի լինին ի տարեկան հարկէն Եգիպտոսի (որ արդէն գրաւական տուեալ է յապահովութիւն պարտատեարց Թուրքիոյ), ի տարեկան հարկէն Պուլղարիոյ (այս կերպիւ Պուլղարիան հարկատու պիտի լինի Ռուսիոյ անասանման ժամանակաւ), յեկամօղի Անատօլուի և ի հանքաց շէնկլիի։

«Բայց յայսմանէ, հաշտութեան պայմանաց մէջ նշանակեալ է նաև ամբողջ վճարումն Ռուս հպատակաց գրամոյն, որով օսմանեան արժէթուղթք գնուած են։ Վերջապէս ուրիշ բառիւք բացատրելով, սնանկացեալ զինու զօրութեամբ բռնադատեալ է շնորհել Ռուս պարտատեարց առաւելութիւն մի՝ որ ոչ է օրինաւոր»։

Միջոցեւ Ռուսիոյ դիւանագէտ ներկայացուցիչքն ամեն ճիշդն ի գործ դնելով չնայազանց տուգանք կառնուն ի Բարձր. Դրանէ, և մինչդեռ Եւրոպիոյ օրագրքք խիստ ծանր կը համարին այս տուգանաց գումարն և իրաւամբ կը բողոքեն նորա դէմ ինչպէս նաև հաշտութե միւս պայմանաց դէմ, Ռուսիոյ չափազանց հայրենասէր անձինք և հասարակութեան խիստ մեծագոյն մասն՝ յախշտակեալ ի զինուորական յաջողութեանց, իրենց դժգոհութիւնը կը յայտնեն բանիւ և գործով բնդդէմ կնքեալ հաշտութեան պայմանաց, զորք յոյժ չափաւոր կը գտնեն։ Ընդէր, կըսեն, մեր յաջիական զօրագունքքն ուղղակի Կ. Պօլսոյ վերայ չը պէտք լինի չորս միլիոն նոյն մայրաքաղաքին, ընդէր ըզմեկիթն Այսթան—Ստեփանօպոլսի չվերածեցին վերստին ի պաշտամունս քրիստոնէական կրօնի և այլն։

«Ժամն հասեալ է, կաղաղակէ ժամանակակից Լուրք» անուն Ռուս օրագիրն, ժամն հասեալ է ի կատար հասուցանել զխաչակրութիւնսը, աղաւթելով մշտնջենաւոր կերպիւ զտնօրինական Սուրբ Տեղին։ Պէտք է յերուսաղէմէն սկսեալ մինչև ի գետեզերս Յորդանանու կաղմել ազատ, քրիստոնէայ և միջազգային գաւառ մի՝ և տալ նմա անկախ վարչութիւն մի»։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԱՆՁԵՍԹԵՐԱՆԱԿ ՀԱՅՐ(1)

Մենք՝ Հայերս աւելի սովաւ ճանաչում ենք և զնահատում ենք մեր ազգի ընդհանուր լաւ յատկութիւնները՝ որքան որ պիտի ճանաչէինք նոյս և գնահատէինք։ Այս մտքի մէջ աւելի և աւելի համոզում է մի Հայ մարդ՝ երբ կատարում է նա մի երկարատե ճանապարհորդութիւն հեռաւոր երկրներում և ծանօթանում է այնտեղ իւր հայրենակիցների կեանքի և գործունէութեան հետ։ Իւրեանց հայրենիքում Հայերը մնալով սահմանափակուած կեանքի նեղ շրջանի մէջ՝ չունին միջոց արտայայտել, ծաւալել և զարգացնել իւրեանց բազմակողմանի և բարձր ընդունակութիւնները, մինչդեռ օտար երկրներում, և մանաւանդ Եւրոպայում, չը պատահած լինելով կեանքի աւելի յաջողակ և բնորոշակ պայմաններով՝ նոքա ակնյայտնի ցուցանում են այդ ընդհանուր ազգային և յիւրաքանչեւ զարմանաց արժանի յատկութիւնները։ Չիւշելով այն բազմաթիւ պատմական յիշատակներ, զորս թողել է Հայոց ազգը Եւրոպայի շատ տեղերում անցեալ դարերու ընթացքում և որոց մասին սակաւուք խօսած եմ իմ նախնիքաց նամակներու մէջ, նոյն իսկ ներկայ դա-

(1) Բաղեալ ի Պեկ. տնտրակի ԱՐԱՐԱՏ ամսագրոյն։

նեցայ բաւական մօտիկ ծանօթանալ նորա հետ։ Ինչպէս Եւրոպայի այն քաղաքները, ուր կատարվում են դործարանների նշանաւոր արտագրութիւններ կամ ուր կան խոշոր նաւահանագիտներ ծովային վաճառականութեան համար՝ նոյնպէս և Մանչեսթրը՝ որը Անգղիայի գլխաւոր քաղաքներից մի է, ի վաղուց գրաւել է Հայ վաճառականների ուշադրութիւնը։ Այժմ այդ տեղ կան 50—60 չափ Հայեր, որոց մէջ չորս հինգ նաև բնտանիք։ Դոցանից մեծագոյն մասը Տաճկաստանցի են՝ Պօլսից, Չիւրուքիայից և այլ տեղերից, իսկ փոքրագոյն մասը Ռուսաստանից, առաւելապէս Թիֆլիզից։ Այս վերջիններս այժմ հազիւ 3—4 հոգի են, որովհետև ներկայ պատերազմի պատճառով Ռուսաստանի առեւտրական գործերը խաբանուած լինելով՝ շատերը ստիպուել են վերադառնալ իւրեանց հայրենիք։ Բայց յուսալի է որ պատերազմից յետոյ իսկոյն կշտանայ վերստին Ռուսաստանցի Հայ վաճառականների թիւը։ Այդ բոլոր վաճառականները պարապում են խոշոր գործերով և ուղարկում են Տաճկաստան և Ռուսաստան միլիոնաւոր դոլարներ ի պարանքներ։ Սորա համար նոքա պահում են Անգղիական ձեռք կազմակերպած գրասենեակներ (օֆիսներ) և համարեա ամենեքեան վաքթ խօսում են Անգղիկներէն։ Իւրեանց քաղաք բնաւորութեամբ, ճարպիկութեամբ, հաւատարմութեամբ և այն մեծամեծ օգուտներով զորս հասուցանում են Անգղիայուց՝

Ահա այս տեսակ արտաքին կարգի առաջարկներով կրճատվեն երևակայութիւնն Ռուսաց, որոց միտքն չափազանց կերպիւ յափշտակեալ են ի յաղթութեանցն, զորս զինուց բազմն առատաձեռնեաց նոցա :

Երկու հրապարական մեծ ժողովներ տեղի ունեցան ի 25ն փետրվարի (ն. Տ.) ի Լոնտոն ի Հայտ—Բէրք հրապարակն . յորոց մին ի նպատաքազարտական ընթացից կառավարութեան և միւսն ի նպատաք խողովութեան :

Առաջին ժողովոյն մէջ մեծ եռանդեամբ ուղղութիւններ եղան ի պաշտպանութիւն քաղաքականութեան նախարարաց խորհրդոյն : Իսկ երկրորդ ժողովն՝ գումարեցաւ առաջինէն քիչ մը ետքը ընդ նախագահութեամբ միտոր Ա. Հիրպերթ ատենաբանին, որ հաղիւ թէ բերանը բացած էր խոսելու, և ահա դրոհ տուին այն ամեն անձինքն որք մասնակից եղած էին առաջին ժողովոյն . հետեւաբար ահաքին կալու մի տեղի ունեցաւ գաղափարի հարուածովք . բարեբաղդարար ծանր հետեւութիւն մի չծագեցաւ . միայն թէ անկարելի է որ յայտ օտարաց բարոյական փնտ մի չլինի անդ զիայի ժողովըրդեան անուան, որ գուցէ իրաւամբ կը պարծենայ իբրեւ քաղաքակրթեալ և խոհական ժողովուրդ մի, արժանի քաղաքակրթութեան տնտեսարար լինելու արիւն ազգայն :

Յիշեալ կրկին ժողովոց մասնակցողաց թիւն թէ 10,000էն աւելի էր, սակայն 100,000ի չափ անձինք ներկայ էին :

Սակաւ ատենախօսութիւնք եղան ի նպատաք խողովութեան, որոց համար թէ և ինչ ինչ որոշմունք եղան, սակայն ի մէջ չլինեց խոսք և անկարգութեանց, և ոչ մի որոշման հաւանութիւն արուեցաւ օրինաւորապէս :

Կենցաղապէս անձանց ծանր ուշադրութեանն ենթակայ եղած է այժմ գեաղանաժողովն, որ պիտի գումարուի յառաջին աւուրս Ապրիլի ի Պէրլին և յորում ներկայ պիտի գտնուին, կրօն, հիւսիսային երկից կայսերութեանց ատենադպիրքն (chancelier), այսինքն Պիլարք և Գորդչաքով իշխանքն ու Անտրասի կոմսն, ինչպէս նաև միւս մեծ տէրութեանց լիազօր դեսպանքն՝ որք պիտի կարգուին :

Այս դեսպանաժողովոյն մէջ պիտի քննուին Ռուսիոյ և Թուրքիոյ մէջ փոխադարձ հաճութեամբ և համաձայնութեամբ կնքեալ հաշտութեան պայմանքն : Եթէ այս պայմանքն գուցէ փոքրիկ փոփոխութեամբ, ընդունելի լինին, հարկաւ կատարեալ հաշտութիւն և երկարժա

մանակեայ խողովութիւն պիտի ունենամք : Իսկ եթէ՝ դժբաղդ արար, համաձայնութիւն մի չգոյանայ ի վիճաբանութեանց դեսպանաժողովոյն, տարակոյս չկայ թէ ընդհանուր պատերազմ և ծանր խառնաշփոթութիւնք տեղի պիտի ունենան մեծ տէրութեանց մէջ . յորոց մասնաւորապէս երկուքն՝ այսինքն Մեծն—Բրիտանիոյ և Աւստրոհունգարիան կրպնդեն թէ ի կառավարութեանն Ռուսիոյ հարկադրեալ պայմանքն հաշտութեան փնտարեր են իրենց յարաբերական երկրին օգտին թէ ի ներկայիս և թէ ապագային մէջ, նմանապէս փնտասկար կը համարին Եւրոպիոյ հաւաստակալութեանն :

Մտոյդ է թէ քաղաքային կողմութիւնն յոյժ կեղակարծ է, ստոյգ է նաև թէ Ռուսիոյ զօրաբանակին պայծառ յաջողութիւնն օգտակար չէ առհասարակ Եւրոպիոյ և մասնաւորապէս Անգլիոյ և Աւստրոհունգարիոյ, ստոյգ է նաև թէ այս երկու տէրութիւնքն զինուորական պատերաշտութեանց ձեռք դարկած են, այսու ամենայնիւ, ընդհանրապէս կը յուսացուի թէ դուրսուրէի դեսպանաժողովոյն մէջ համաձայնութիւն մի կրնայ գոյանալ ի մէջ մեծ տէրութեանց որոց և ոչ միոյն՝ նոյն իսկ յաղթական Ռուսիոյ՝ ձեռք չտար որ եւրոպական պատերազմ մի բացուի : Ռուսի յոյժ հաւանական է որ Եւրոպիոյ տէրութիւնքն չափաւորեն զգահանմունքս իւրեանց, և Ռուսիան ինչ ինչ շնորհումներ (concessions) ընէ, ընդհանուր խողովութիւնն հաստատուն պահելոյ համար . յորմէ կարօտութիւն ունին ամեն տէրութիւնք և ամեն ժողովուրդք :

Հեռագիրն կը ծանուցանէ թէ Անտրասի կոմսն պաշտօնապէս յայտներ է դուստապին Պատգամաւորութեանց, թէ կը յուսայ որ ի խորհրդակցութեանց դեսպանաժողովոյն համաձայնութիւն մի պիտի ծագի : Բայց բանախօսութեանց այս վախճանն անշուշտ դիւրին չէ . ինչպէս նոյնինքն լորտ Տէրպին յայտնեց լորտերուն խորհրդանոցին մէջ տակաւ թէ՛ դեսպանաժողովոյն անդամաց գործն յոյժ դժուարին է :

Կ. Պոլսոյ Յունաց Պատրիարքարանն յանցելումն մատուցեր է Բարձրագոյն Դրան զհետեւեալ խնդրագիրն, զոր ՄԱՍԻՍ լրագրոյն փետրվարի 18 թիւէն քաղելով՝ կը հրատարակեմք ի տեղեկութիւն ընթերցողաց մերոց :

Պատրիարքարանս բաւական ժամանակէ ի վեր չէ դադրած թէ բանիւ բերանոյ և թէ թագրիրներու միջոցաւ Բ. Դրան հաղորդելէ տէրութեան այլեայլ դաւառաց մէջ հաւատարիմ հպատակ քրիստոնէից Ձերբեղներէ, Ձեյպէքներէ և այլ անկանոններէ կրած յափշտա

կութիւնները, ջարդերն և պատուոյ բռնաբարութիւններն, որք աղքատաբարութեամբ և հեռաբար կը ծանուցուին Պատրիարքարանիս : Շատ անգամ ուղղութեան նաև Մետրապօլիտանականներն, որոց մէջ համառօտիւ կը յայտնուէին զանազան կողմեր տեղի ունեցած ողբալի անցքերն, այսինքն աւարառութիւնք, կոտորածք, պղծութիւնք եկեղեցեաց, բռնաբարութիւնք, առեւանգութիւնք, դերութիւնք տըղայոց և օրիորդաց, հրկիւղութիւնք զիւրօրեկցեայլ սարսափելի շարագործութիւնք, որոց համար կայսերական բարձրագոյն կառավարութեանէն կը լինէր որ կարելի եղածին չափ չուտով կանոնաւոր դօրք զրկուի, որպէսզի այն կողմերու բնակչաց գոնէ կեանքը վերկուի վերոյիշեալ շարագործ հրոսակներուն սպառնալիքէն, և միանգամայն ի դորձ դրուին պէտք եղած միջոցներն, որպէսզի մինչև այն ատեն անփնա մնացած տեղերն ալ չփնտուին : Թէև Պատրիարքարանս վեց ամիս շարունակ իւր բոլոր կարողութեամբն աշխատեցաւ կայսերական պատկառելի կառավարութեան ուշադրութիւնը հրաւիրել այն իրողութեանց վրայ, ինչպէս յայտնի կը տեսնուի ներկայ տեղեկագրին մէջ ներկայեալ երեսուն թագրիրներու ցուցակէն բայց և այնպէս, մեր անկախութեանց հակառակ և ընդդէմ վերկարար հրամանաց և տնօրէնութեանց կայսերական կառավարութեան վերոյիշեալ թշնամի և արեան ծարաւ խումբերն այնպիսի վայրագութեան և գողանութեան հասան, որ դժբաղդ քրիստոնէաները բնաջինջ ընելու նպատակաւ՝ թէ՛ այր, թէ՛ կին, թէ՛ երիտասարդ և թէ՛ ծերունի, թէ՛ մեծ և թէ՛ փոքր անխնայ արէ անցուցին, մինչև անգամ քրիստոնէից ծաղիկեալ գիւղաքաղաքներն ու գիւղերն հրկիւղեալ և աւերակ դարձան յանդգնեցան, այնպէս որ մարդկային դրիչ մը անկարող է նկարագրել այն սարսափելի թըրուառութիւնն, որուն կենդանի վկայ է նոցա այս աւուր արկնաթաթաւ և ակուր վիճակը :

Առաւել կոպտալին այն է որ քանի մը տեղեր կայսերական կառավարութեան ստորին պաշտօնեայնէն ոմանք այս սարսափելի շարագործութեանց մասնակից գտնուած են, ոմանք ալ աններելի անհոգութեամբ իրենց նախնական պարտականութիւնը չեն կատարած, բայց և այնպէս ցարդ անպատիւ մնացած են : Նմանապէս անպատիւ կը մնան բուն շարագործներն, որք շուկաներու և նոյն իսկ մայրաքաղաքիս փողոյներուն մէջ յայտնապէս և համարձակ կը լրաձառեն իրենց յափշտակած աւարներն, որոց մէջ կը գտնուին բազմաթիւ եկեղեցական դար

մեր հայրենակիցները մեծ համակրութիւն և յարգանք են վայելում Մանչեսթրեում : Իսկ ինչ վերաբերվում է նոցա Հայութեան՝ ես կառնեմ՝ երանի՜ կլինէր Հայոց ազգին, եթէ Հայերը օտարութեան մէջ ամենայն տեղ նոցա պէս ջերմեւանդ և ազգատէր լինէին : Նոքա ունին մի փոքր բայց գեղեցիկ աղիւսաչէն եկեղեցի, որը կառուցած է 1870 թուին . սորան կցած է մի փոքրիկ եռաշարկանի աղիւսաչէն տուն քահանայի, եկեղեցւոյ սոլասարի և այլ պիտոյից համար : Այս երկու շինուածքի ծախքը եղել է 10000 անգլիական ոսկու չափ (70,000 ռուբլի) : Եկեղեցին որպէս դուրսից և նոյնպէս և ներսից բաւական սիրուն է . սեղանը չունի խաչիկալ, այսինքն նորա կողքերը բաց են, իսկ ժողովուրդի համար շարած են դպրոցական նստարանների նման նստարաններ ըստ օրինակի եւրոպական եկեղեցեաց : Ժամասացութիւնը լինում է գրեթէ ամենայն օր, իսկ կիրակի օրերը մատուցանվում է Ս. Պատարագ . այժմէկայ և համարեա միշտ այդպէս է եղել, մի վարդապետ, իսկ նորան օգնում են ժամասացութեան ժամանակ ինքեանք ժողովրդականք չապիկ հագնելով : Բարեբախտաբար՝ այսպիսի սակաւթիւ խումբի մէջ կան տալի չափ անձինք, ամենեւեան ճաճկատանցիք, որք միանգամայն կանոնաւոր և հմուտ կերպով ծանօթ են եկեղեցական երգեցողութեան : Ահա ապացոյց թէ սրբալի մեծ կարեւորութիւն ունի մեր ազգային դպրոցների

համար եկեղեցական երաժշտութեան հիմնաւոր և կանոնաւոր պատասխանութիւնը :

Մանչեսթրի հայերը ոչ թէ բաւականացել են եկեղեցին շինելով, այլ ցանկանում են և աշխատում են ապահովացնել նորա յարատեւ գոյութիւնը : Իսկ եկեղեցւոյ տարեկան ամենատեսակ ծախսոց համար իւրաքանչիւր ոք վճարում է որոշեալ տուրք : Այդ տուրքերը ժողովելու և այլ գործերը սնօրինելու համար նոքա ունին ատենապետ և դանձապահ, և ըստ հարկաւորութեան կաղնում են ժողովներ, որոց համար եկեղեցական տան մէջ յատկացրած կայ մի բաւական բնդարձակ և բարեկարգ կերպով զարդարած դահլիճ : Վարդապետը ստանում է ձրիապէս բնակարան, վառելիք և լոյս (դպ) և ծառայ, ամսական 10 ոսկի (70 ռուբլի) սննդադրամ և հանդերձ ըստ պիտոյից . այսպէս ապահովացրած լինելով՝ նա պարտաւոր է կատարել բոլոր օրինակատարութիւնքն առանց վարձատրութեան և եկեղեցւում չկայ դանձաձակ . սակայն շատերը ըստ հայկական բարեպաշտութեան հարանիքի, միրտութեան, և այլն, համար պարգեւատրում են իւրեանց հովիւը :

Մանչեսթրի Հայերը չեն մոռանում և իւրեանց հեռաւոր հայրենակիցները և առատաձեռնութեամբ օգնում են նոցա հարկաւոր ժամանակ . այսպէս տարի չանցնի որ մի քանի ժողովարարութիւն չլինի նոցա մէջ ճաճկատանցի կամ Ռուսաստանցի աղագնաց համար, և այս

իսկ օրերս Կ. Պոլսոյ Ս. Պատրիարքի խնդրանք հաւաքել էին նոքա իւրեանց մէջ 145ի չափ անգլիական ոսկի (1000 ռ. չափ) Կ. Պոլսոյ ազգային հիւանդանոցի համար :

Նոքա չեն մոռանում և իւրեանց մայրենի լեզուն և ամենեւեան շատ գեղեցիկ կերպով խօսում են Հայերէն . այստեղ անհրապեւում է Պոլսոյ ոճը թէ խօսակցութեան և թէ եկեղեցական երգեցողութեան մէջ :

Այսպիսի և սոցա նման գովելի և մխիթարելի արժանաւորութեանց հետ մեր սիրելի Մանչեսթրեոյի հայրենակիցները ունին ինչպէս յատուկ է մարդկան նաև մի քանի պատկառութիւններ :

Նախ թէ և առհասարակ սիրով են միմեանց հետ, բայց իւրեանց վարդապետի վերաբերմամբ թեթեւ հակառակութիւն ունին և բաժանուած են երկու մասն : Մեծագոյն մասն սիրում է և յարգում է իւրեանց հովիւը, և արժադեմք վարդապետ փրկալէմեանը յիւրաւի սիրելի և յարգելի անձն է իւր քաղցր բնաւորութեամբ և հեղ ու պարկեշտ բարքով : Սա բնիկ ճաճկատանցի է (կարծեմ Վ. անեցի), բաւական աշխարհատես մարդ, գիտէ լաւ գրոց լեզուն և ունի շատ ձեռագիր աշխատակցութիւններ ազգային պատմութեան և ժամանակագրութեան վերաբերեալ : Իսկ փոքրագոյն մասը, որը բաղկացած է աւելի երիտասարդներից, թէ և նոյնպէս սիրում է և յարգում է իւրեանց հովիւը, բայց կամենում է ունենալ եւրոպա

որ, սուրբ անօթներ, եկեղեցական զգեստներ կայլ նուիրական նիւթեր : Մինչդեռ այն անձինք, որոց ձեռքը կը գտնուին քրիստոնեայ մանկունք, արու և էգ, որոց ճիւղաններէն հասնէ մէկ քանին կը լինէ կորզուիլ, և այս ալ յայտնի ապացոյց մ'է որ նորա են այս չարագործութեանց՝ յախշտակութեանց և ոճրագործութեանց հեղինակներն և ընդհանրապէս բոլոր այս թշուառութեանց սրտածառներն : Բայց և այնպէս անոնցմէ ոչ ոք մինչև ցարդ ձերբակալ եղած և արդարութեան յանձնուելով բնա օրինակ պատժուած է :

Վերջիշեալ թշուառութեաններն Անատուի մէջ ալ չկրկնուելու համար հոն գաղթող Չէրքիներէն, Չէյպէքներէն և այլ չարագործ խմբերէ, Պատրիարքարանս, իւրիւ ազգային կեդրոնական և հոգեւոր իշխանութիւն, որոց միջոցաւ կայսերական կառավարութեան կողմէն ազգիս խնդիրքն, կրկնութեայ իրեն ներկայացուցաւ պահանջմանց համեմատ խնդրել որ՝ վերադառնալ պիտի գործոց այն կողմերն ալ կը ըլլան արգելող իրաւոյ հրամաններով հանդերձ, որոք եղածին չափ կանոնաւոր դօրք դրկուի այն կողմերն՝ առաջնորդութեամբ փաստհոսման արժանի անձանց, որք իրենց նուիրական պարտականութիւնը ծանշելով, իրեն պատուանաւոր տեղի ունենալիք որ և է անկարգութեան, հակին և ուշադիր ըլլան, որպէսզի անօթներն վայրագութիւնը չկրկնուին :

Հրաման դրկուի նաև Անատուի և Բուսնէի իւրաքանչիւր կուսակալաց, (ինչպէս որ ներկայ տարւոյ Սէֆէր ամսոյն մէջ զրոյժ թագրերն են իրենց կրկնող ըլինք) որ բարեկամական աջակցութեամբ օգնութեան ձեռք կարկառեն իրենց դաւաճաց մէջ զանազան Մետրապօլիտայ, Եպիսկոպոսայ և ֆոխանորդաց, որպէսզի կառուցին Չէրքիներուն, Չէյպէքներուն և այլ անկարգ հրոսխմիւրու ձեռքը գանուող արու և էգ քրիստոնեայ աշաքը վրիժել, շուկաներու մէջ եկեղեցական զգեստաց և այլ կողպուածից անկարգ տեսնուելուն ձեռքերնէն առնուլ և անտեղի առաջնորդարաններուն յանձնել :

Յընդդրենք նաև որ նոյն հրամանները արուին նաև Միւթէսարքիներու, Գայմադամներու, Միտիներու և այլ կառավարական պաշտօնէից : Ըստորում այն անձինք, որոց ձեռքը կը գտնուին քրիստոնեայ աղաքը և այլ աւարներ, յաւատարմիչ, մարդասպան, գերեզմար և աւերիչ են՝ պիտի է որ անպատճառ ձերբակալուին և ըստ օրինակ պատժուին :

Պատրիարքարանս, ինչպէս որ ներկայիս

անապատ գիտնական և լուսաւորեալ հոգեւորական թէ՛ օտարականներն մէջ աւելի փայլելու համար և թէ՛ այլեւայլ գիտնական ձեռնարկութեանց տպարանի, ամսագրի և այլն հաստատութեան համար : Բայց որպէսզի այդպիսի անձը պահելու և այդպիսի դօրծեր սկսելու համար կհարկաւորին աւելի մեծամեծ գումար : Եւ ուստի համաձայնութիւնը չէ կայանում կուսակցութեանց մէջ : Թէև տեսական ապացոյց փոքրագոյն մասը աւելի իրաւունք ունի որ կողմը, բայց գործնականապէս զուրկ չէ իրաւունքից և մեծագոյն մասը, և կարելի է երբեք կրնա որ այսպիսի բնա երեւութիւն թեթեւաբանութիւնը՝ ժամանակով աւելի մեծ անօթութիւններ կ'առաջացնէ :

Յընդդրող՝ Մանչեսթրի Հայերը հաստատուելով մի քանի ժամանակ առաջ ազգային ընթերցարան, որոց համար յատկացրել էին առանձին սենյակ եկեղեցական տան ներքնայարկում, որոց կարգաւոր ազգային լրագիրներ աւելի անկարգ ընկն ազգային անցքերէն : Բայց այդպիսի և գոյնի ազգատիրական եռանդը չուրաւ պաշտել, և այժմ համարեն ոչ ոք չկայ իրենց արանը յաճախող : Այդ ընթերցարանում կայ մի փոքրիկ զբոսը գրքեր, մնացածը անօթութեան վարդապետ Ծափազարեանցից : Երբորդ՝ Մանչեսթրի Հայերը սկսել են ուշադրութիւն դնել և փնտրուիլ սովորութիւնը իրենց, այն է ամուսնանալ օտարականներէ :

Թագրերն են իրենց կը տեսնուի, ըստ որում չէ գաղթած վերջ ամիսէ ի վեր թագրերներու, նամակներու, մագալթաններու և հետագրութեանց միջոցաւ ինչպէս նաև կենդանի ծայրիկ ի դէպ ժամանակին յայտնել յիշեալ գաւառաց մէջ տեղի ունեցած աւարառութիւնները, կոտորածները, առեւանգութիւններն ու աւերութիւնները, և ամենայն առաջին առնուիլ ինքզինք, չկրնար առաջի ազգին պատասխանատու համարուիլ իրեն զանցառու իւր պարտաւորութեանց :

(Ամիս և ստորագրութիւնը անգամայն Ս. Սիմոն և Եւսեբ ժողովոյն)

ԱԶԳԱՅԻՆ

Փոռն լրագրոյն անցեալ ամսոյ 22 թուոյն մէջ զհետեւեալ կարեւոր և սիրայորդոր յօդուածն ընթերցեալք :

Առջի օրը Թէրեմանը—Էֆրեար ի լրոյ առեւտած էր մեր ազգին, թէ օսմանեան և ուսական կառավարութեանց մէջ միանգամայն որոշուել է ժամանակ մը ուսական զօրք բնակչոցնէլ Հայաստանի մէջ, փերտերն ու Պաշտպանութիւնը հեռացուցելու, և հարստահարութեանց ու զրկանաց միանգամ ընդ միշտ վերջ տալու համար :

Երէկ ալ Լէվոնդ—Հէրըլտ ի մէջ այլոց տեղեկութիւն տուած էր, թէ հաշտութեան դաշնագրին մէջ յօդուած մ'ալ աւելցրել է, որ կը տրամադրէ իւրմէլի մէջ ըլլալիք բարեկարգութեանց նման բարեկարգութիւններ Անատուի մէջ ալ ընել :

Հաշտութեան դաշնագրոյն տրամադրութեան վրայ տակաւին մինչև այս առաւօտ պաշտօնական տեղեկութիւն տեսնուած չըլլալով չենք կրնար յիշեալ ծանօթութիւններն բոլորովին ստոյգ կամ անստոյգ համարել : Սակայն տարակոյս չունիմք, թէ Անատուի կամ բնա ևս է ըսել—Հայաստանի տարածքում ամենախեղձ և անհասկնալի վիճակն ալ աշխարհածանօթ ըլլալով՝ կայսերական կառավարութիւնը իւր ներկայ վերանորոգման պահուն մէջ երկրին նոյն կարեւորագոյն կողմն, և նորա ժրաշան ու հաւատարմութիւնը մեր ազգն ալ մնացած չէ, և մեր ազգին քարոքութեան ու յառաջադէմ զարգացման համար անհրաժեշտ եղած կարգադրութիւններն ընելու պարտաւոր է :

Այսու անհրկմիտ յուսով կապանք ժամէ ի ժամ, տեսնել պաշտօնական տեղեկութիւններու փերտին, Չէրքիներն ու Պաշտպանութիւնը :

Ըստ մեծի մասին անգղիացուհիներէ հետ : Օտարականներն եթէ մինչև անգամ շատ ցանկանայ, երբէք չէ կարող Հայ մայր լինել Հայ մանուկներէ համար, և մենք ունինք անթիւ օրինակներ ինչպէս նոյն իսկ վառ և եռանդոտ ազգասէրներն, որոց կանայք օտարականներն եղել, զաւակները չեն խնայել մինչև անգամ Հայերէն խօսել : Գուցէ օգտակար լինէր եթէ մեր հայրենակիցները ամուսնանալով եւրոպացուհիներու հետ չուտով վերագաւառային իւրեանց հայրենիքը և միշտ մնային այն տեղ, այն ժամանակ այդ օտարականներ ինքեանք կ'օգտորէին Հայերէն՝ նոյն զաւակները կ'օգտանային ազգային ոգւով և ինքեանք կը մտնէին մեր ընտանեկան կեանքի մէջ մի քանի լաւ եւրոպական յատկութիւններ : Բայց քանի որ նորա ամուսնանալով օտարականներու հետ համարեալ մշտապէս մնում են օտար կեանքին, նոյն զաւակները միշտ կ'օրած կ'լինին Հայոց ազգի համար, որը պիտի հարկաւ սկսի նուազանալ թուով :

Աւարտելով խօսքս՝ ես հրաւիրում եմ մեր Մանչեսթրի Հայերենակիցներէ խոհեմամիտ և ազգասիրական ուշադրութիւնը իւրեանց վերջիշեալ երեք թերութեանց վերայ, յուսալով որ սիրով և ներողամտութեամբ կ'ընդունին սոյն մտերմական հրաւերքը :

Վ. Վ. Բ.

Լոնդոն, 22 (4) Նոյեմբեր 1877

Երեսն մեր ազգին կրած զրկանաց, փնտրուց ու տառապանաց բարձման համար մէկ ի կողմանէ այս ակնկալութիւնն ունենալով հանդերձ, միւս կողմանէ ալ պարտէ ազգովին ամեն միջոց ի գործ դնել՝ առանձին պատակամանց, յուզմանց ու սնտոյ վեճերու ի սպառ վերջ տալու համար : որք ոչ նուազ փնտրուց են մեր ազգային յառաջադիմութեան ու զարգացման : Ազգային ժողովներ, մայրաքաղաքիս և դաւառաց մէջ, Առաջնորդ և ժողովուրդ, միաբանութիւն և վանահայր, ամեն տեղ սիրով և միաբանութեւ գործելու են ի շահ ազգին : Յաւալի է արդարեւ տեսնել, որ մեր Պատրիարքարան գաւառներէն եկած գրութեանց մէկ մասը, բաւական մեծ մասը՝ առանձին վեճերու պատմութեամբ լի են : Ահաւորիչ, ժամանակէ մը հետէ Մշոյ վանահայրն ու միաբանութիւն երկպառակած են միաբանութեան մէկ մասն՝ վանահօր ծառայող կրկնադէնի, միւս մասն՝ ամբաստանող յորդորներ անլսելի կըման, և միւսնոյն վիճակը դժբաղդաբար կը շարունակէ, և հետզհետէ կը լայնանայ : Ծանաղելի կըլլայ, որ այսպիսիք եթէ վերջին յորդորի մը վրայ ալ անուղղայ մնան, միահամուռ արտաքուստ վանքէն, և այլոց յանձնուի : Ազգը այսպիսեայ հաճոյց խաղալիկ չէ : վանքերը ազգային յառաջադիմութեան համար հիմնեալ են ի նախնեաց, և ոչ թէ երկպառակութեան, կրկն ու ատելութեան դժոխային վայրեր ընելու համար :

Վերջ տալ հարկ է ամեն այն առանձին յուզմանց, որք ինչպէս ըսինք՝ կրնան մեր ազգին յառաջադիմութեան խախտարար ըլլալ օտարին փնտրանքէն աւելի : Անհատ մը, ընտանիք մը, ազգ մը, առաւել ինքն իրմէ կ'լիարար, քան թէ օտարէն :

Ի նամակէ միոյ գրելոյ ի Ռուսաստանէ ի Լէն ֆետրուարի՝ զհետեւեալ ազգային կարեւոր տողսն քաղեմք :

«Աստուծոյ զմիտս ամենեցուն դրաւեալ ունի զարդիս անհարկին իմն հետաքննութիւն՝ թէ զոր արդեօք տեղի կ'ալլի ի շարս պայմանաց առաջիկայ հաշտութեան անուն և բաղդմերոյն Հայաստանի, կամ գէթ մասինն տիրապետելոյ ի Ռուսաց, և ընդ մէջ յուսոյ և կառկածանայ տալեւապիս բաղդմը յազգասիրաց : Յոնոյ՝ զի ակնունին թէ ըստ օրինակի Բուլղարաց աշխարհին և Հայաստանի՝ ոչինչ նուազ քան զնոսա տառապանքն և սրտխոյռն արիւնաներկ նահատակեալն ի վերջում պատերազմի ի չարագործ փրդաց՝ արժանի դատեցի ինքնօրէն իմն վարչութեան : և կ'աւանանայ զի չն ևս գիտակ են ամենքեան թէ որպիսի աշօք հայրցին արդ ի գնացս մերոցն և ի գրուածս և ի զրոյցս խռովան և անխելան, ոչ միայն Եւրոպական տեղի պետութիւնք, այլ մանաւանդ Ռուսք և Օսմանեանք : : : : Զայլմէն ամենայնէ գիտեմ զի սա ձեռն ունիք տեղեկութիւնս հաւատարմի ի լրագրաց Եւրոպայ, և ոչ շատանայ կեղաւարծ համբաւովք լրագրացն մերոյ՝ որք հրատարակին ի Կ. Պօլիս» :

Կ. Պօլսոյ «Փոռն» լրագիրն իւր թուոյն մէջ որ ի 18 փետրվարի, կըլտէ :

Չորեքշաբթի առաւօտ լսեցինք, թէ մեր Ս. Պատրիարք Հայրը առջի օրը երեկոյն Այլ—Սթէֆանօ վտ. Տատեանց ապարանքն երթալով, բարձրապատիւ Նիքոլաս Մեծ—Դքսին ներկայացրել, մեծ յարգանք ընդունուել և գիշերու ալ հոն անցուցրել է, ու զմտուն պատճառաւ չկրնալով վերագաւառալ Այս ներկայացման ժամանակ, Նար—Պէյեան դերաւ տէր խօրէն սրբազան ալ ներկայ դռնուեր է :

—Կըլտեմք թէ վտ. Պ. Տատեան պայազատք, ինչպէս նաև Գաբամաճեան էֆէնտիք զատուալ փառաւոր հացկերոյթ տուեր են Այլ—Սթէֆանօյ իրենց տունը ի պատիւ բարձրա Նիքոլաս Մեծ—Դքսին, որ երբեմն Գաբամաճեանց և երբեմն Տատեանց տունը կը ընկալի եղեր :

—Կըլտեմք գարձեալ թէ ի պատճառս անձնական տկարութեան Կ. Պօլսոյ Ս. Պատրիարք հօր, ազգային վարչութեան խառն ժողովքստ առաջարկութեան Ն. Սրբազնութեան, պատ-

